# ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

## ՆՇԱՆԱՎՈՐ ՏԱՐԵԹԻՎ

1963 թվականի հուլիսի 30-ին լայնորեն նշվեց մեր հայրենիքի և միջազգային ռևոլյուցիոն շարժման պատմության փառավոր տարելիցներից մեկը՝ ՌՍԴԲԿ II համագումարի 60-ամյակը: ՌՍԴԲԿ II համագումարը, որտեղ ստեղծվեց նոր տիպի ռևոլյուցիոն մարքսիստական-լենինյան կազմակերպությունը՝ բոլշևիկյան փառապանծ պարտիան, մեծագույն իրադարձություն էր մեր բազմազգ հայրենիքի աշխատավորության կյանքում, Ռուսաստանի և ամբողջ աշխարհի պրոլետարական - ռևոլյուցիոն պայքարի տարեգրության մեջ:

Մեր պարտիայի ստեղծման կարևոր նշանաձողերից մեկը հանդիսացավ 1895 թվականին Վ. Ի. Լենինի կողմից հիմնադրված «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միությունը», որը ռևոլյուցիոն պարտիայի առաջին սաղմն էր Ռուսաստանում: ՌՍԴԲԿ II համագումարի նախապատրաստման ու անցկացման գործում անգնահատելի դեր կատարեց լենինյան «Իսկրա»-ն, որն առաջադրեց ու մշակեց նոր տիպի ռևոլյուցիոն մարքսիստական պարտիայի ստեղծման սկզբունքային և կազմակերպական հիմունքները: Վ. Ի. Լենինը և նրա գլխավորած «Իսկրա»-ն խորտակիչ գաղափարական հարված հասցրին բանվորական շարժման մեջ բույն դրած օպորտունիստներին, կատարեցին վիթխարի կազմակերպչական աշխատանք՝ բանվորական միջավայրից դաստիարակելով գիտակից հեղափոխականների հիանալի կադրեր, որոնք միշտ բարձր պահեցին ռևոլյուցիոն մարքսիզմի դրոշը: «Գիտակից պրոլետարիատի ամբողջ ծաղիկը,— նշում էր Վ. Ի. Լենինը,—կանգնեց «Իսկրա»-ի կողմը»: Ռևոլյուցիոն շարժման բախտի համար վճռական նշանակություն ունեցան Վ. Ի. Լենինի՝ «Իսկրա»-ում լույս տեսած հոդվածները և հատկապես նրա «Ի՞նչ անել» հանճարեղ աշխատությունը:

Վլադիմիր Իլյիչ Լենինի և Ռուսաստանի մյուս մարքսիստների տիտանական ջանքերը, լենինյան «Իսկրա»-ի սկզբունքային ու հետևողական պայքարը նոր տիպի ռևոլյուցիոն մարքսիստական պարտիա ստեղծելու համար ՌՍԴԲԿ II համագումարում պսակվեցին պատմական հաղթանակով:

Համագումարն ընդունեց մեր պարտիայի առաջին ծրագիրը, որը պայքարի հզոր զենք հանդիսացավ Ռուսաստանում բուրժուա-դեմոկրատական և սոցիալիստական ռևոլյուցիաների հաղթանակի համար մղված պայքարում: ՌՍԴԲԿ-ն միակ պարտիան էր II Ինտերնացիոնալում, որի ծրագրի մեջ, ի տարբերություն արևմտաեվրոպական սոցիալ-դեմոկրատական պարտիաների, ուղղակիորեն առաջադրված էր պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման խնդիրը, դիկտատուրա, որն անհրաժեշտ էր շահագործող դասակարգերի դիմադրությունը ճնշելու և սոցիալիզմ կառուցելու համար:

ՌՍԴԲԿ II համագումարն ընդունեց նաև պարտիայի կանոնադրությունը, որի առաջին պարագրաֆի մարտովյան ձևակերպումը շուտով, III համագումարում փոխարինվեց լենինյան ձևակերպումով: Երկրորդ համագումարը պարտիայի ղեկավար օրգաններում, ձայների մեծամասնությամբ, ընտրեց Վ. Ի. Լենինին և լենինյան «Իսկրա»-ի կողմնակիցներին:

Համագումարում հաղթանակեց «իսկրայական», լենինյան ուղղությունը, լենինիզմի գաղափարախոսությունը: «Բոլշևիզմը,—գրել է Վ. Ի. Լենինը,—որպես քաղաքական մտքի հոսանք և որպես քաղաքական պարտիա, գոյություն ունի 1903 թվականից»: Ստեղծագործաբար շարունակելով և զարգացնելով Մարքսի-Էնգելսի մեծ ուսմունքը, պրոլետարիատի հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինը համակողմանիորեն հիմնավորեց ռևոլյուցիոն նոր տիպի պարտիայի պատմական դերն ու նշանակությունը, նրա գործունեության հիմնական սկզբունքները հասարակության վերափոխման, աշխատանքի մարդկանց վեհ իդեալների կենսագործման համար մղվող մեծ գոտեմարտերում:

Պարտիայի ծննդյան ժամանակ Վ. Ի. Լենինը նրան անվանում էր «փոքրիկ հատիկ» և կանխագուշակում, որ այդ «փոքրիկ հատիկը ամեն ինչ կվերափոխի»: Եվ առաջնորդի մարգարեական խոսքերը իրականացան. մեծ Լենինի

ստեղծած և կոփած կոմունիստական պարտիան մեր բազմազգ հայրենիքի ժողովուրդներին հասցրեց համաշխարհային-պատմական հաղթանակների:

Մեր պարտիայի փառապանծ պատմության մեջ կարևորագույն իրադարձություն հանդիսացան ՍՄԿՊ XX և XXII համագումարները: Անհատի պաշտամունքի պսակազերծումն ու նրա վնասակար հետևանքների վերացումը, լենինյան նորմերի վերականգնումն ու զարգացումը պարտիական և պետական կյանքի բոլոր օղակներում՝ նոր հորիզոններ բացին ժողովրդի ստեղծագործական ուժերի ծաղկման համար: ՍՄԿՊ XXII համագումարն ընդունեց պարտիայի նոր՝ երրորդ ծրագիրը, որը ստեղծագործական մարքսիզմ-լենինիզմի փայլուն փաստաթուղթ է, ՍՍՀՄ-ում կոմունիստական հասարակարգի կառուցման կոնկրետ, գիտականորեն հիմնավորված պլանը:

Ամփոփելով մեր պարտիայի պատմական մեծ ճանապարհը, Ն. Ս. Խրուշչովը ՍՄԿՊ Կենտկոմի հունիսյան պլենումում ասաց. «Պարտիայի, նրա մարքս-լենինյան գաղափարախոսության ուժը ստուգված է կյանքով: Ավելի քան 60 տարի է, ահա, պարտիան պայքարում է հանուն ժողովրդի գործի և հաղթանակում է՝ ղեկավարվելով մարքսիզմ-լենինիզմի անմահ ուսմունքով». ՍՄԿՊ հունիսյան (1963 թ.) պլենումը, որը քննարկեց պարտիայի գաղափարական աշխատանքի հերթական խնդիրները կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում, կարևորագույն իրադարձություն հանդիսացավ մեր ամբողջ երկրի կյանքում: Դատապարտելով կոմունիստական և բուրժուական գաղափարախոսությունների «խաղաղ գոյակցության» քարոզը և այն որակելով իբրև դավաճանություն մարքսիզմ-լենինիզմի նկատմամբ, ՍՄԿՊ հունիսյան պլենումն իր ընդունած որոշման մեջ ընդգծեց. «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՐՏԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆ Է ԳԱՂԱՓԱՐԱՊԵՍ ԱՊԱՀՈՎԵԼ ՍՄԿՊ ԾՐԱԳՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄԸ, ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՆՅՈՒԹԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ, ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ՆՈՐ ՄԱՐԴՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ. ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԳՈՆՈՒԹՅՈՒՆԸ, ԾԱՎԱԼՈՒՆ ՀԱՐՁԱԿՈՒՄ ԳՈՐԾԵԼ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ, ՄԱՐԴԿԱՆՑ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՆՑՅԱԼԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՎՐԱ»:

ՍՄԿՊ պլենումը արժանի հակահարված տվեց Չինաստանի Կոմպարտիայի ղեկավարության պառակտողական և օպորտունիստական վարքագծին, այն հերյուրանքներին, որոնք ուղղված են մեր պարտիայի լենինյան քաղաքականության դեմ, միջազգային կոմունիստական և բանվորական շարժման կարևորագույն սկզբունքների դեմ: Համայական մեկնաբանություն տալով կոմունիստական ու բանվորական պարտիաների ներկայացուցիչների Մոսկվայի խորհրդակցությունների Դեկլարացիային և Հայտարարությանը, խեղաթյուրելով այդ պատմական փաստաթղթերի կարևորագույն դրույթները, Չինաստանի Կոմպարտիայի ղեկավարությունը անհիմն, զրպարտիչ հարձակումներ է կատարում մեր պարտիայի և եղբայրական մյուս կոմունիստական պարտիաների վրա, ՍՄԿՊ XX, XXI, XXII համագումարների լենինյան որոշումների և ՍՄԿՊ նոր ծրագրի վրա: ՍՄԿՊ Կենտրոնական կոմիտեն Սովետական Միության պարտիական կազմակերպություններին և բոլոր կոմունիստներին ուղղված «Բաց նամակում» ամենայն հստակությամբ և սկզբունքայնությամբ բացահայտեց ՍՄԿՊ և ՉԿՊ տարաձայնությունների էությունը, ցույց տվեց այն վնասակար և վտանգավոր ուղին, որ բռնել է Չինաստանի Կոմպարտիայի ղեկավարությունը: «Մեր լենինյան պարտիան,— ասված է «Բաց նամակում»,—եղբայրական բոլոր պարտիաների հետ միասին պայքարել է ու պայքարում է հանուն բանվոր դասակարգի, բոլոր աշխատավորների միասնության այն պայքարում, որ մղվում է ընդդեմ իմպերիալիզմի, հանուն խաղաղության, դեմոկրատիայի, ազգային անկախության և սոցիալիզմի»:

Փառավոր ուղի է անցել Սովետական Միության Կոմունիստական պարտիան՝ մեր հերոս ժողովրդի բոլոր հաղթանակների կազմակերպիչն ու ոգեշնչողը, տիտանական պայքարով և պատմական նվաճումներով հատկանշվող հոյակապ մի ուղի, որ սկիզբ առավ ՌՍԴԲՊ II համագումարից և հաղթականորեն ձգվում է դեպի մարդկության լուսաշող ապագան, դեպի կոմունիզմ:

Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ